ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2021 թվականի N 781-Ա

ԳԱԳԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ԻԶԱԲԵԼԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 18 նիստի արձանագրությունը և քաղաքացի Գագիկ Մնացականի Մնացականյանի 2021 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 4143 դիմումը, **որոշում եմ՝**

1.Գագիկ Մնացականյանին /ծնվ. 03.02.1963թ./ նշանակել խնամակալ Իզաբելա Հովհաննիսյանի /ծնվ. 24.09.2008թ./ նկատմամբ երկու տարի ժամանակով:
2.Գագիկ Մնացականյանին նշանակել հոգաբարձու Լուսինե Հովհաննիսյանի /ծնվ. 25.09.2006թ./ նկատմամբ՝ երկու տարի ժամանակով:
3.Գագիկ Մնացականյանին վերապահել ի շահ իր խնամարկյալի, առանց հատուկ լիազորագրի կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:
4.Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ համայնքի ղեկավարին կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ՀՀ վարչական դատարան:
5.Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է սույն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2021թ. դեկտեմբերի 23
ք. Արմավիր

Հաստատում եմ՝ համայնքի

ղեկավար

ՔԱՂՎԱԾՔ

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԹԻՎ 15 ՆԻՍՏԻ

Ք. ԱՐՄԱՎԻՐ 22.12.2021 թ. ժամը՝ 10^{30}

Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 22-ին կայացած թիվ 18 նիստին մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Պողոսյան
Տեղակալ՝ Ա. Գրիգորյան
Անդամ՝ Հ. Ասատրյան
Լ. Խամիսյան
Քարտուղար՝ Ն. Խաչատրյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Արմավիր քաղաքի Մխիթար Հերացի փողոցի 10 շենքի 52 բն. բնակիչ Գագիկ Մնացականի Մնացականյանի /ծնվ. 03.02.1963թ./ 2021 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 4143 դիմումը՝ իր անչափահաս թոռների՝ Իզաբելա Մնացականի Հովհաննիսյանի /ծնվ. 24.09.2008թ./ նկատմամբ խնամակալ և Լուսինե Մնացականի Հովհաննիսյանի /ծնվ. 25.09.2006թ./ նկատմամբ հոգաբարձու նշանակելու մասին:

Զեկ. Ռ. Պողոսյան

1.ԼՍԵՑԻՆ- Ռ. Պողոսյանը ներկայացրեց Արմավիր քաղաքի Մխիթար Հերացի փողոցի 10 շենքի 52 բն. բնակիչ Գագիկ Մնացականի Մնացականյանի 2021 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 4143 դիմումը այն մասին, իր անչափահաս թոռներ՝ Իզաբելա Մնացականի Հովհաննիսյանը /ծնվ. 24.09.2008թ./ և Լուսինե Մնացականի Հովհաննիսյանը /ծնվ. 25.09.2006թ./ մնացել են առանց ծնողական խնամքի (մայրը շուրջ վեց տարի է՝ լքել է երեխաներին):

Ուստի դիմումատուն խնդրում է իրեն նշանակել Իզաբելա Մնացականի Հովհաննիսյանի /ծնվ. 24.09.2008թ./ նկատմամբ խնամակալ և Լուսինե Մնացականի Հովհաննիսյանի /ծնվ. 25.09.2006թ./ նկատմամբ հոգաբարձու երկու տարի ժամանակով:

Դիմումին կից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Գագիկ Մնացականի Մնացականյանի պատճեն
3. Իզաբելա և Լուսինե Հովհաննիսյանների ծննդյան վկայականների պատճենները
4. Գագիկ Մնացականյանի առողջության մասին տեղեկանք
5. Իզաբելա և Լուսինե Հովհաննիսյանների առողջության մասին տեղեկանքներ
6. Ընտանիքի կազմի մասին տեղեկանք
7. Հարևանների կողմից տրված հայտարարությունները
8. Հարևանների անձնագրերի պատճենները
9. Երեխաների կողմից տրված համաձայնագրերը
10. Տեղեկանքներ դպրոցից
11. Մնացական Մնացականյանի մահվան մասին վկայականը

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1. Սույն պրծանագրությունը ներկայացնել Արմավիր համայնքի ղեկավարին՝ Գագիկ Մնացականի Մնացականյանին /ծնվ. 03.02.1963թ./ նշանակել իր անչափահաս թոռների՝ Իզաբելա Մնացականի Հովհաննիսյանի /ծնվ. 24.09.2008թ./ նկատմամբ խնամակալ և Լուսինե Մնացականի Հովհաննիսյանի /ծնվ. 25.09.2006թ./ նկատմամբ հոգաբարձու երկու տարի ժամանակով:
2. Միջնորդել համայնքի ղեկավարին հաստատելու հանձնաժողովի որոշումը:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Պողոսյան

Քարտուղար՝ Ն. Խաչատրյան